

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվանը 6 ռուբլի  
Առանձին համարները 5 կոպեկով

Քիֆիսում գրվում են խմբագրատան մէջ

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мшакъ“

Կամ Tiflis, Rédaction „Mschak“

Տ է Լ է Փ օ ն № 258

Քաղաքագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր տողատեղին 10 կոպեկ  
Տ է Լ է Փ օ ն № 258

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ի Կ Ի Բ Գ Ի Բ Ա Ր Ծ Ր ՈՒ Լ Ե

Լեւոն Ստեփանեան, Կատարինէ Տէր Յովհաննիսեան, Վահան և Անուշահան Մէլ-  
րեանցները, Ովստանայ և Գարեգին Մարգարեանցները ցաւք սրտի յայտնում են  
առաջինը իր սրբիլի ամուսնու երկրորդը հարսի, երրորդը ու չորրորդը եղբոր ամուս-  
նու, հինգերորդը որդու, իսկ վերջինը բորժ

## Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Կ Ի

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 27 ին Ամբիօք Կատարիլիում է ուրախ թ,  
երեկոյեան ժամը 6-ին, Օրլովская № 26, իսկ թաղումը շարժի՝ ղէպի նորաչէն ս.  
Աստուածածին եկեղեցին և այնտեղից Խօշիվանքի գերեզմանատուն: 1—1

### ԲՈՎԱՆԻՊՈՒԹԻՒՆ

Պատերազմական բանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Մամուլ. Ափսոս, փոքն էլ է հոտում.  
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պա-  
տերազմի լուրեր. Նամակ Շվեյցարիայից. Ար-  
տաքին լուրեր.—ՆԵՌՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—ՅԱՅՏԱՐԱ-  
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մօտիկ ան-  
ցեալից:

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՐԸ

III

Հեռագիրները հարորեցին, թէ Մուկ-  
ղէն է հասել հոկտեմբերի 26-ին գեներա-  
լայ Լինեվիչ, որ նշանակված է առաջին  
մանջուրական զօրքի հրամանատար: Ինչ-  
պէս յայտնի է՝ այդ զօրքի հրամանատար  
մինչև այժմ գեներալ Կուրոպատկինն էր,  
որ այժմ նշանակվել է գլխաւոր հրամա-  
նատար բոլոր զօրքերի վրա Հեռաւոր  
Արևելքում:

Գործակալութեան հեռագիրները յայտ-  
նում են, թէ մեծ ճակատամարտ ղեռ տե-  
ղի չունի այժմ պատերազմական բեմում:  
Բայց մանր ընդհարումները մշտական  
անհանգստութիւն են պատճառում երկու  
կողմի առաջապահ զօրքերին: «P. B.» լրագրի  
թղթակցի ասելով, խուզարկու խմբերը  
անընդհատ հետևում են թշնամու զօրքե-  
րին և ուսումնասիրում նրանց ամեն մի  
շարժումը: Թէ սուսները և թէ եսպոնացի-  
ները զբաղված են լուրջ կերպով պատ-  
նէշներ շինելով: Հակառակ կողմերի շի-  
նած պատնէշների գծերը մի քանի տեղե-  
րում այնքան միմեանց մտեցել են, որ  
նրանց միջև եղած տարածութիւնը 800  
քայլից անկի չէ: Այդ տարածութեան

վրա տեղի ունի հրացանաձուլիւն և  
թնդանօթաձուլիւն:

Պատերազմական բեմում ցուրտը շատ  
զգալի է դարձել: Մուկղէնի մօտ եղած  
զօրքերը իրանց բունած դիրքերում են-  
թարկված են ցուրտ եղանակի զրկանք-  
ներին: Թէ և այդպէս զօրքը տաք հա-  
զուստ ունի, այնու ամենայնիւ մարդիկ  
զրականապէս սառչում են: Ամենուրեք  
թէ առաջապահ շարքերում, թէ թիկունքի  
կողմերում զօրքերը սպորտատում են ա-  
պաստարաններ: Վճարված է գեանափոր-  
ներ շինել նոյն իսկ առաջաւոր պահակ-  
ների համար:

Մթերքներ մատակարարող վարչու-  
թիւնը, ինչպէս հարորում է «P. C.»-ի  
թղթակցը, զբաղված է ոչ միայն տեղա-  
կան մթերքներ գնելով, այլ և վառելիքի հա-  
մար «գետաօրան» ձեռք բերելու հոգով:  
Գետաօրան տեղական կործին մի տեսակն  
է, որ ունի շատ երկար և հաստ բուն,  
հատիկը գործ է անվում իբրև կերակուր,  
իսկ բունը իբրև վառելիք և կուտւնները  
ժածկելու նիւթ: Տեղական ազգաբնակու-  
թիւնը գողտչում է մեծ քանակութեամբ  
մթերքներ վաճառելուց, որովհետև երկրի  
վիճակը անորոշ է և երկիւղ է տիրում,  
որ մի գուցէ յետոյ մեծ կարիք զբաղվի:  
Այս տարվայ բերքը լաւ է եղել: «Կարմիր  
Սաչի» ընկերութիւնը որոնում է յարմար  
բնակարաններ իր պէտքերի համար կա-  
յարանի մօտ և քանակութիւններ է վա-  
րում տեղական հողեւորականութեան հետ:  
վարձելու նրա քրմատան շինութիւնները:  
Յապոնական զօրքերը, «P. C.» լրագրի  
ասելով, աջակցութիւն են ստանում չի-

նական կուլինների կողմից: Նապոնացի-  
ները կուլիններին սովորեցնում են զինու-  
թական վարժութիւններ և նրանցից զըն-  
դեր կազմելով ուղարկում են Լաօղունեան  
թերակողու հարաւային կողմերը, իսկ  
այդ տեղերի եսպոնական վարժ զօրքերը  
փոխադրում են հրահա, ղէպի պատերազ-  
մական բեմը: Չինացիների ասելով, մօտ  
60,000 կուլի վերցված են վարժեցնելու  
համար. նրանց մի մասը նշանակված է  
Լաօղունեան թերակողու համար, իսկ  
միւս մասը կը պահվի եսպոնական կղզի-  
ներում, որպէս զի կարելի լինի այնտեղի  
եսպոնական զօրքերը հարկը պահանջած  
ժամանակ ուղարկել ղէպի պատերազմա-  
կան բեմը:

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ներկայ ուսու-եպոնական պատերազմը բազ-  
մաթիւ արեւաններ կատարելով ցոյց տուեց  
ուսու օտարակեր հրապարակախօսներին, թէ  
որքան անկեղծ էին նրանք, տարիների ըն-  
թացքում կասկածի ստուեր գցելով Ռուսաս-  
տանի օտարազգի սարքերի հպատակաւ հա-  
ւատարմութեան վրա: Մենք յիշում ենք, որ  
մինչև իսկ «Новое Время»-ն, պատերազմի  
զաշտում կատարվող ծանրակշիւ իրողութիւն-  
ների ճշման տակ, հարկադրված եղաւ խոս-  
տովանի, որ տարիներով իր ատկութեան ա-  
ռարկան դարձած հրէաները խղճմանքով,  
անձնագրութեամբ են կատարում այն պար-  
տականութիւնները, որ իւրաքանչիւր հպատակ,  
անկախ իր ծագումից ու լեզուից, ունի ղէպի  
ընդհանուր հայրենիքը: Ներկայ պատերազմի  
երևան հանած այդ մեծ իրողութիւնը առանձ-  
նապէս շեշտում է «Русскія Вѣд.» լրագրի  
նա ասում է.

Մանր պատերազմը, որ իններորդ ամիսը  
է ինչ ուղվում է հեռաւոր Արևելքում և ար-  
ղէն կրանի է այնքան գոհեր և միջոցներ,  
միացել է պատերազմի դաշտում պետու-  
թեան բոլոր ազգութիւնները այդ գոհերի,  
այդ տանջանքների, զրկանքների և աշխա-  
տանքների միջոցով: Բանակի շարքերում  
ուսանելի հետ միասին կուտում են լեռացի-  
ները, լիսովցիները, լատիշները, գերմանա-  
ցիները, հրէաները, ֆինն, թուրք, մոնղոլ,  
կովկասեան ազգութիւնները: Սպանվածների  
և վիրաւորվածների թում, բացի ուսանելից,

լինում են և օտարազգիներ. որքանց ըն-  
տանիքներ կան պետութեան բոլոր ծայրե-  
րում, պատերազմի ծանր հետեանքները ի-  
րանց վրա կըրում են ազգաբնակութեան բո-  
լոր խմբերը: Պետութեան բոլոր հպատակ-  
ների այս եղբայրաբար կանգնել մի և նոյն  
զբօրանքների տակ, Ռուսաստանում ընակվող  
բոլոր ցեղերի մասնակցութիւնը պաշտպա-  
նութեան մի և նոյն գործի մէջ, զինուորա-  
կան պարաստութիւնները միատեսակ կա-  
տարելու մէջ,—մի անգամ էլ պիտի ընդգծեն  
այն, որ բոլոր առաջապահների համար  
անհրաժեշտ են միանման իրաւունքներ, միա-  
տեսակ արդարութիւն: Պետութեան բոլոր  
ընակիչները պիտի գտնվեն օրէնքի միա-  
տեսակ պաշտպանութեան տակ, նրանք բո-  
լորը, առանց ազգութեան և դաստնութեան  
խտրութեան, պիտի նային իւրաքանչիւր  
մի ամբողջութեան անդամների մի ընդ-  
հանուր հայրենիքի դաւանելի վրա:

Տեղական թշնամութիւնները դատապար-  
տում է լրագրի: Դա ուսու լաւագոյն գոր-  
ծիչները համար մի անշիջ սկզբունք է եղել  
ամեն ժամանակ: Տարաբախտաբար, Ռուսաս-  
տանի ընթերցող հասարակութիւնը առաջնոր-  
դում են ոչ միայն լաւագոյն, այլև, լուսամիտ  
գործիչները: Նրանց ղեկաց կանգնած են այն-  
պիսի հրապարակախօսներ, որոնք իրանց կողմն  
են համարում ցեղական թշնամութիւնները բորբո-  
քելը, նրանք իր ազգայնամոլ աղանդութեան  
թեան կրքերով կուրացած՝ չեն ուղում անհնա-  
տարական ճշմարտութիւններ անգամ ճանա-  
չել: Մանջուրիայի արեւոտ դաշտերում այդ  
աղգայնամոլ խաւարակները հաւանած ազ-  
գութիւնները գեղեցիկ օրինակներով ցոյց են  
տալիս, թէ ինչպէս գիտեն արեւմտեան թըշ-  
նամութիւն ցանոյններին, ինչպէս ազատ են  
մնացել փոխադարձ ատկութիւնների թոյնից  
և ինչպէս կարող են իրանց արեւում ցօղել  
ընդհանուր հայրենիքի բարձր դադարաբը:  
Նրանք իրանց գործերով, իրանց անձնագրի բա-  
լութեամբ խցելում են ատկութիւնը բաւոյնե-  
րի կողմերից: Գոնէ այսուհետև լսելին նը-  
րան, գոնէ այսուհետև հասկանալին իրանց սե-  
զործի ամբողջ անձնութիւնը:

### ԱՓՍՈՍ, ՓՈՂՆ ԵՒ Է ՀԱՍՏԻՍ

Ճշմարտութիւն է, թէ փողը չէ հոտում:  
Փողը ձեռք բերելով, ով է նկատում նրա  
վրայի բլրտիւրը, արատը, ցեխը, արիւնը, որի  
նա իսկապէս գինն է:  
Եւ փողը չէ հոտում, նրան ձեռք են բերում

### Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

#### ՄՕՏԻՎ ԱՆՅԵԱԼԻՑ

Նոր ամսադիրը երևան էր գալիս ժամանա-  
կին: Թէ և մի անգամայն խորթ էր օրվայ տէրը  
զարձած քաղաքական ակնկալութիւններին,  
բայց իր բովանդակութեամբ կենսական էր,  
շահագրգիռ զարթոնական աշխարհում գործող  
Ների համար: Նա իր էջերում երևան էր հա-  
նում այն նորութիւնը, որ ճէնց նոյն ժամա-  
նակները, ամենքի աչքի առաջ, յերափոխում  
էր զարթոնական գործը, զնելով նրան ժամա-  
նակակից գիտութեան լայն և մարդասէր հիմ-  
քերի վրա:

Այդ նորութիւնը ինքը Յակոբ Տէր-Յովհան-  
նիսեանը չէր տալիս: Նա յատուկ մանկավար-  
ժական պատրաստութիւն չունէր, նա էլ վա-  
հան վարդապետի պէս մի իրաւաբան էր, թէ և  
վարչական պաշտօն էր վարում զարթոնական  
աշխարհում: Բայց նա մի խմբագիր էր, որ  
առաջ քաշեց պատրաստ մասնագետներին, ա-  
պարդէղ տուեց նրանց: Ահա Տէր-Յովհաննի-  
սեանի կատարած դերը, որ կապեց նրա ա-  
նունը մեր զարթոնական գործի պատմութեան  
հետ:

Իր առաջին համարի աստիճանային յօդու-  
ածում «Մանկավարժական Թերթը» իր ընթեր-  
ցողներին յանձնարարում էր մի նոր անուն,

որ մինչև այդ յայտնի չէր հայ հասարակու-  
թեան: Դա Առաքել Բահաթրեանն էր, որ  
այնուհետև դարձաւ «Թերթի» գլխաւոր սիւնը  
և արագութեամբ ձեռք բերեց մի շատ յայտ-  
նի, պատուաւոր անուն մեր մանկավարժական  
աշխարհում:

Ներկայումս Առաքել Բահաթրեանը մի մո-  
ռացված անուն է, մոռացված իր հեռուոր,  
օտար երկրի տակ մամուտած գերեզմանի  
մէջ. նա վախճանվեց 1883 թ. ին Սիմֆերոպոլ  
քաղաքում, զիւր բոլորովին երիտասարդ, զիւր  
նոր միջին ցոյց տուած թէ ինչքան կարծող  
ոյժ է մեր զարթոնական կեանքում: Գոնէ տա-  
րիս բաւական էր, որ Բահաթրեանի պէս գոր-  
ծիչը մոռացվի: Բայց ինչ եւ ասում: Գերեզ-  
մանը ինքն ըստ ինքեան մոռացութեան ան-  
դունդ է: Մտկայն միթէ միայն այնտեղ են  
մոռացվում գործիչները: Իսկ կեանքի մէջ  
Միթէ կեանքը գերեզման չէ գանձում, երբ  
նրա միջից հեռանում են այն տարբերը, ո-  
րոնք գործիչներն են անուցանում, մեծացնում:  
Գոնէ քանի զարթոնական գործիչներ այսօր  
կենդանի են, բայց դարձեալ մոռացված...

Առաքել Բահաթրեանը հայ զարթոնի առա-  
ջին երախտաւորներից մէկն է: Նա յատուկ  
մանկավարժական պատրաստութիւն էր ստա-  
ցել Գերմանիայում, բայց կեանքի մէջ մըսնե-  
րով, հայ զարթոններին չը նուիրվեց, այլ մտաւ  
պետական ծառայութեան մէջ, մանկավարժու-  
թեան դասեր էր տալիս Սիմֆերոպոլի ուսուց-  
չական սեմինարիայում: Այդ պաշտօնի մէջ էր  
նա, երբ իմացաւ որ Թիֆլիսում «Մանկավար-

ժական Թերթ» պիտի հրատարակվի և իսկոյն  
առաջարկեց իր աշխատակցութիւնը ձրի, ո-  
գեղոված զազափարով: Հէնց առաջին համա-  
րից նա հանդէս է գալիս իբրև դասաւանդա-  
կան յայտնի մեթօդի ներկայացուցիչ, իբրև  
որոշ ու հաստատ մանկավարժական դադա-  
փարներ իւրացրած մարդ: Այն ժամանակ, երբ  
նա առաջին քայլերն էր անում հայոց ման-  
կավարժական զբաղանքութեան մէջ, մեղանում  
արղէն կար նոյնպէս Գերմանիայում պատ-  
րաստված մի մանկավարժ էր, պ. Սիդորա  
Մանդրինեանը: Բայց նա «Մանկավարժական  
Թերթի» մէջ շատ քիչ բան ունի, այնպէս որ  
զիսաւոր գրողը, ամսագրի կենտրոնական ոյժը  
Առաքել Բահաթրեանն էր:

Համարձակ կարելի է ասել, որ «Մանկա-  
վարժական Թերթն» էլ խորհրդածութիւնների  
և վերացական դատողութիւնների մի օրգան  
էր ինչ «Գարդի» նման, եթէ զրկված լի-  
նէր Առաքել Բահաթրեանի այնքան եռան-  
դուն, բեղմնաւոր աշխատակցութիւնից:

Այսօր էլ, կարգաւոր Բահաթրեանի յօդուած-  
ները, մարդ զգում է թարմութիւն, կենդանի  
գործի թարմութիւնը: Նա պատմում է թէ  
ինչ հայեացքներ կան Գերմանիայում, ինչ  
մանկավարժական մեթօդներ գոյութիւն ունեն,  
ինչ է պահանջվում կանոնաւոր, առողջ հիմ-  
քերի վրա զրկված զարթոնք, նրա մէջ ապրող  
մարդկանցից: Բայց պատմելը բաւական չէր:  
Բահաթրեանը իր սովորածը, իր իւրացրածը  
գործադրում էր հայկական կեանքում, հայ  
զարթոնի վերաբերմամբ: Այդտեղ նա ունի շատ

ինքնուրոյն աշխատութիւն, այդտեղ նա ու-  
սուցման նոր մեթօդի առարկայ է դարձնում  
մայրենի լեզուի դասաւանդութիւնը, ղեկա-  
վարում է հայ ուսուցչին, ցոյց տալով նրան  
թէ ինչպէս պէտք է վարվել աշակերտների  
հետ, ինչպէս պէտք է գրաւել երեխային,  
զարգացնել նրա մէջ դրական ընդհանու-  
թիւնները և այլ այսպիսի հարկեր ու մի բա-  
նիք:

Մեզ պէս մի ազգի մէջ, որ սովորելու կա-  
րօտութիւն ունի, բայց միջոցներ շատ չունի,  
Առաքել Բահաթրեանը շատ լաւ հասկացել էր,  
որ ամեն ինչ պէտք է սկսել տարրականից,  
այսուրեւից: Այդ պատճառով նա ընդհանուր  
ցուցմունքներով չէր լաւաւանանում, այլ ամ-  
սագրի մէջ առելի էր ուսուցչին մանկավար-  
ժութեան պարզ օրինակելի դասեր, բա-  
ցատրելով մի և նոյն ժամանակ այն լայն,  
մարդասիրական գեղեցիկ սկզբունքները, որոն-  
ցով պիտի ղեկավարվի իր կոչման համապա-  
տասխանող ուսուցիչը:

Ահա ինչն էր աջողութեան դադանիքը: Ո-  
չինչ քրմական մթութիւն ու վեհութիւն, պարզ,  
հասարակ, ամենքից հասկանալի մի ժողովրդա-  
կան մարդ, որ գիտէր ամեն ինչ զնն ունին-  
դիւնների առաջ, ինչպէս ասվում է՝ հալել, անել  
լսողի ուղեղի մէջ: Տալով դասաւանդութեան  
սեսական մեթօդը, որի հիմքն էր «լուսիւ-  
խօսել-կարգալ ու բերել», նա պարզ բացա-  
տրութիւնը բաւական չէր համարում և գործ-  
նական դասերով էլ աւելի ևս պարզում էր  
այդ մեթօդը: Իսկ թէ ինչ էր Առաքել Բահա-





